

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(առարկա)

ԹԵՄԱ՝ Նոր նյութի հաղորդումը ՏՀՏ կիրառմամբ «Բառագիտություն»
բաժինն ուսումնասիրելիս

Կազմեց՝ Զավաթյան Նաիրա Վլադիկի (անուն, ազգանուն, հայրանուն)

Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023թ

Բովանդակություն

Ներածություն.....	3
Նոր նյութի հաղորդումը SՏՏ կիրառմամբ «Բառագիտություն» բաժինն ուսումնասիրելիս	4
Եզրակացություն	14
Գրականության ցանկ	15

Ներածություն

Հանրակրթության բնագավառն այսօր բավականին լուրջ մարտահրավերների առջև է կանգնած: Այդ մարտահրավերները վերաբերում են կրթական գործընթացի բոլոր մասնակիցներին՝ ոլորտի պատասխանատուներին, մանկավարժներին, գիտնականներին, ծնողներին, սովորողներին: Միայն միասնական համատեղ ջանքերով, իրական համագործակցությամբ կարելի է լուծել խնդիրները և գրանցել առաջընթաց: Տեղեկատվությամբ գերհագեցած մեր կյանքում արդեն պարզունակ և անարդյունավետ է երբ ուսուցիչը դասարան է մտնում միակ, անփոխարինելի ու հիմնական տեղեկատվության աղբյուրով՝ դասագրքով:

Եթե դպրոցում աշակերտները ձեռք բերեն համակարգչային գրագիտություն, ինքնուրույն աշխատելու, մտածելու հմտություններ, ապա մտնելով կյանք նրանք հասարակական կյանքին ինտեգրվելու քիչ խնդիրներ կունենան: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների գործածությունն ուսուցման գործընթացում նպաստում է աշակերտների մոտիվացիայի աճին: Բացի նրանից, որ ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն է կարող փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Իսկ այս ամենը համապատասխանում է ուսումնական գործընթացի նկատմամբ ժամանակակից կառուցողական մոտեցմանը, որը նախատեսում է գիտելիքի հայթայթում և ստեղծում հենց աշակերտի կողմից:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ՏՀՏ կիրառման արդյունավետությունը «Բառագիտություն» բաժինն ուսումնասիրելիս:

Աշխատանքի խնդիրներն են ուսումնասիրել ՏՀՏ-ի կիրառումը ուսուցման գործընթացում և ներկայացնել ՏՀՏ-ի կիրառման արդյունավետությունը դասի ժամանակ:

Նոր նյութի հաղորդումը SՀS կիրառմամբ «Բառագիտություն» բաժինն ուսումնասիրելիս 21-րդ դարը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (SՀS) դարաշրջան է, որոնց սրընթաց զարգացումն ամբողջ աշխարհում նոր պահանջներ է դրել կրթական համակարգերի առջև:

Այսօր տեղեկատվության հետ աշխատանքը չի կարելի պատկերացնել առանց համակարգիչների, թվային այլ տեխնոլոգիաների և ժամանակակից կապուղիների: Դրանք, լինելով մարդու մտքի թռիչքի արդյունքը, մնում են սուկ սարքեր, որ ազատում են մարդուն մեծածավալ մեխանիկական աշխատանք կատարելուց: Ժամանակակից աշխարհում կտրուկ աճել ու ընդլայնվել են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հնարավորությունները գլոբալ համացանցի (ինտերնետ) ի հայտ գալով ու մարդու գործունեության բոլոր ոլորտները, այդ թվում և կրթության, խոր ներթափացմամբ: Ուսուցման էլեկտրոնային միջոցների օգտագործումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա և նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսուցման ինովացիոն մեթոդների զարգացման համար:

SՀS-ները հնարավորություն են տալիս ինչպես սովորողներին, այնպես էլ ուսուցիչներին, դպրոցի ղեկավարությանը և բոլոր աշխատակիցներին գտնել տեղեկույթի բազմազան և բազմաթիվ աղբյուրներ և արդյունավետ օգտվել դրանցից¹:

Կրթության և SՀS փոխհարաբերության մյուս կողմը հենց կրթության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման միջոցով կրթության համակարգի արդիականացումն է, ուսուցման և ուսումնառության արդյունավետության մեծացումը²:

Հանրակրթության պետական կրթակարգը սահմանում է, որ կրթության ոլորտում SS-ների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Համացանցի օգտագործումը զգալիորեն բարձրացնում է ուսումնական նյութի որոնման, հաղորդման ու յուրացման արդյունավետությունը: SS-ների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը: Նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան

¹Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան, Տեղեկատվական –հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Աստղիկ, 2014, 232 էջ:

² Բայադյան Հ., Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, Երևան, 2005, էջ 79:

աջակցող և գնահատող գործընկեր: SS-ները սերտորեն առնչվում են բոլոր առարկաներին և դրանց դասավանդմանը³:

Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ: Ակադեմիկոս Ա. Պ. Մեյնոնովի հայտարարությունը, թե՛ «Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում», պետք է այն որոշիչ լինի յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում:

Միաժամանակ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների ներմուծումը ուսուցման գործընթացում ձևավորում է մի շարք հիմնախնդիրներ, որոնք կապված են համապատասխան ծրագրային ապահովման մշակման, էլեկտրոնային միջոցների բովանդակային հագեցվածության և կրթության ոլորտում օգտագործման հետ:

Ուսումնական գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը մի քանի կարևոր կողմեր ունի, մասնավորապես.

- Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է առարկաների միջև կապի դրսևորմանը: Դա առանձնապես կարևոր է ուսուցման տարրական աստիճանում, երբ ուսումնական առարկաների մեծ մասն ինտեգրված է դասավանդվում:
- Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է ստեղծագործական ու նորարարական մոտեցումների զարգացմանը, ինչը չափազանց կարևոր է հիմնախնդիրների վրա հիմնված կառուցողական դասարանային միջավայր ստեղծելու համար:

Տեխնոլոգիաների կիրառությունը դասապրոցեսում, համակարգչի հետ հաղորդակցվել սովորելը կարող է փոխել այն ձևերը, որոնցով տեղի է ունենում ուսուցումը: Համակարգչի օգնությամբ ուսուցումը կարելի է կազմակերպել՝ հաշվի առնելով մատուցվող դասի բնույթը և այն բաժանել հետևյալ խմբերի.

1. Հրահանգային
2. Թեթևացնող
3. Հայտնագործման

³Ղարիբյան Ռուզաննա, Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ, 2020/№2, էջ 97-108:

4. Կռահման

5. Հեռահար ուսուցում

6. Նպատակային ուսուցում

SZS-ի ներդրումը ուսումնական գործընթացում թույլ է տալիս փոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ, որակապես նոր խնդիրներ: Օրինակ՝ բնագիտական առարկաների վիրտուալ լաբորատորիաների ստեղծումը, որոնք թույլ են տալիս համակարգչով կատարել հետաքրքիր գիտափորձեր և կառուցել բնական երևույթների այնպիսի մոդելներ, որոնք իրական պայմաններում իրականացնելն անհնար է: Այս ծրագրի նպատակն է՝ SZS օգտագործման միջոցով բարձրացնել սովորողների առաջադիմությունն ու կատարելագործել դասավանդման որակը՝ նպաստելով ուսումնական գործընթացի ժամանակային և տարածական սահմանափակումների վերացմանը⁴:

Միջնակարգ հանրակրթական դպրոցում ֆիզիկայի ուսուցումը հետապնդում է հետևյալ խնդիրները.

- 1.Զարգացնել սովորողների իմացական հետաքրքրությունները և ստեղծագործական ընդունակությունները:
- 2.Սովորողներին ծանոթացնել ֆիզիկայի հիմնական տեսական և փորձնական մեթոդներին:
- 3.Ձևավորել սովորողների փորձարարական կարողությունները, նրանց սովորեցնել չափումներ կատարել և փորձերի արդյունքները մշակել:
- 4.Սովորողների մեջ ձևավորել գիտելիքները ինքնուրույն ձևով բերելու և դրանք գործնականում կիրառելու կարողություններ:
- 5.Սովորողներին տալ գիտելիքների որոշակի համակարգ՝ ֆիզիկայի օրենքների, երևույթների, հիմնական փորձերի և փաստերի մասին:

Դասի ընթացքում SZS-ի օգտագործման նպատակները կարող են լինել.

- գիտելիքների արդիականացումը
- նոր դասի բացատրության շարունակությունը

⁴Եզանյան Նունե, Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների դերը կրթության մեջ և կիրառումը դասագործընթացում, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ, 2020/№2, էջ 215-223

- գիտելիքների նախնական ամրապնդումը
- գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը:

Գիրք - համակարգիչ - ինքնուրույն աշխատանք. ահա այն եռանկյունին, որի արդյունքը միայն արդյունավետ կլինի:

SZS-ի արդյունավետությունը լիովին կախված է ինչպես կրթական ծրագրային միջոցների կիրառման որակից, այնպես էլ դրանց ռացիոնալ և հմուտ ներդրումից ուսումնական գործընթացում: Սովորողների մեջ պետք է մշակել՝ դիտելու, համեմատելու, վերլուծելու և համակցելու գործընթացում հաղորդվող տեղեկատվությունն օժանդակելու դեր պետք է կատարի:

Հայաստանի Հանրապետությունում կրթական քաղաքականության իրականացման գործում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է կրթության որակի բարձրացմանը:

«Տեխնոլոգիան՝ որպես մարդու և հասարակության կարիքները բավարարող Դասարաններում որպես ուսուցման և ուսումնառության միջոցներ կարող են կիրառվել ձայներիզներ, տեսաժապավեններ, հեռուստացույցներ, տեսաձայնագրիչներ, համակարգիչներ, պրոեկցիոն լապտեքներ և այլն: Այսօր համակարգիչներ օգտագործելու ունակությունը կարող է նույնքան կարևոր լինել, որքան կարդալու, գրելու, ձայնագրելու, մեքենա վարելու կամ հեռախոսից օգտվելու ունակությունը:

Իսկ ինչպե՞ս կարող է տեխնոլոգիան բարձրացնել ուսման որակը: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները օգտագործում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար: Ուստի, ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանվող առարկաների շրջանակը:

Ունենալով տարբեր առարկաների ժամերին համակարգչի օգտագործման հնարավորություն, դպրոցը կվերազինվի նոր որակի պրակտիկ և մեթոդական հնարավորություններով, ուսումնական գործընթացը կկարողանա աշակերտին տալ արդի պահանջներին բավարարող ավելի գործնական և կայուն գիտելիքներ: Ակնհայտ է,

որ համակարգիչն ուսուցչին ազատում է ձանձրալի, միապաղաղ գործողություններ կատարելուց, իրական հնարավորություններ է ստեղծում կենտրոնանալու գործունեության ստեղծագործական կողմերի վրա: Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և այլ բացառիկ հնարավորությունները՝ դասը կարելի է դարձնել պարզ, դիտողական և նույնիսկ «հրավիրող»: Համակարգիչը կարող է օգնել ուսուցչին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար: Էկրանին ցուցադրվող գործողությունների հաջորդականությունը կարող է ըմբռնելի դարձնել մատուցվող նյութը, վերացական գրքային նյութը կարող է վերածել պրակտիկ իրադրության:

Իհարկե, համակարգչի օգտագործումը ոչ բոլոր նյութերի բացատրության և քննարկման ժամանակ է նպատակահարմար. այս դեպքում այն կարող է ստեղծել ավելորդ ծանրաբեռնվածություն: Ուստի նյութի ընտրությունը պետք է կատարել նրա՝ համակարգչային ներկայացման արդյունավետությունից ելնելով:

Համակարգչի ներդրումը շատ կարևոր է, քանի որ աշակերտները սովորում և զարգանում են տարբեր արագությամբ, այսինքն՝ տեխնոլոգիան կարող է անհատականացնել ուսուցումը: Նրանք պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել տեղեկությունները. այս դեպքում տեխնոլոգիաները նպաստում են, որ, օրինակ՝ աշակերտները բանավիճեն, քննարկեն, սեփական կարծիք արտահայտեն և այլն:

Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են աշակերտների մտածողությունն ու գրելու հմտությունները, օրինակ՝ համակարգչով գրելու դեպքում աշակերտներն ավելի ինքնավստահ են:

Տեխնոլոգիան կարող է զարգացնել գեղարվեստական արտահայտչականությունը (տեսաժապավենների ստեղծումը, թվային լուսանկարչությունը և այլն նպաստում են երեխաների գործունեության գեղարվեստական արտահայտչականության բարձրացմանը): Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են հնարավորություն տալ ուսուցչին խնայել ժամանակը և ջանքերը ներդնել այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն, ուսումնական միջավայրի մշտական գնահատում ու բարելավում:

Որպեսզի այսօր երեխաները իրենց ուսման ընթացքում լիարժեք կերպով օգտագործեն կրթական տեխնոլոգիայի հիմնական տարրերը, անհրաժեշտ է, որ մանկավարժները տիրապետեն համակարգչային գրագիտությանը: Վերջինս դպրոցում կենդանի մթնոլորտ ստեղծելու հիմնական պայմաններից մեկն է, որը սովորողների մեջ հետաքրքրություն է առաջացնում և խթանում այն ստեղծագործաբար օգտագործելու ջանքերը: Համակարգչային ուսուցումը կարող է առավել բարձր արդյունք ապահովել միայն այն դեպքում, երբ լիարժեք գիտակցվի, որ դա բոլորի և յուրաքանչյուրի գործն է, երբ համակարգչային գրագիտությանը տիրապետելու խնդիրը ձեռք բերի անձնային իմաստ և դիտարկվի որպես անհետաձգելի խնդիր: Համակարգիչը մեծացնում է ուսուցանվող նյութի յուրացման արագությունը, բայց ոչ զգալի չափով, քանի որ այդ արագությունը որոշվում է աշակերտի ընկալման շեմով: Ուստի, չպետք է մտածել, որ համակարգչային տեխնիկայի կիրառումը զգալիորեն կկրճատի ուսման տևողությունը: Հնարավոր է նաև ուսուցման գործընթացի դանդաղում, քանի որ համակարգիչը թույլ էտալիս խորամուխ լինել երևույթի այնպիսի մանրամասների ուսումնասիրման մեջ, որոնք ուսուցման ավանդական մեթոդների դեպքում չեն շոշափվում:

Համակարգչի օգտագործումը չպետք է դառնա ինքնանպատակ: Կիրառման ձևերն ու բովանդակությունը պետք է բխեն դասի ընդհանուր պլանից: Աշակերտները պետք է ունենան համակարգչի հետ աշխատելու բավարար հմտություններ:

Պետք է պատրաստ լինել այն բանին, որ մոտ ապագայում կվերանա համակարգչի «նորույթ» լինելու առանձնահատկությունը, և նրան կնայենք մոտավորապես այնպես, ինչպես հիմա նայում ենք լաբորատորիաներում առկա և չօգտագործվող տեխնիկական այլ միջոցներին: Համակարգիչները որպես ուսուցման պրոցեսի կազմակերպման միջոց առավել ցանկալի նվեր են բնագիտության ուսուցիչներին: Այս առարկաների դասավանդման ժամանակ օգտագործվում են համակարգչի բացառապես բոլոր հնարավորությունները: Ինչպես հայտնի է, ֆիզիկան փորձարարական գիտություն է, և ֆիզիկայի դասավանդման գործընթացն էլ պետք է հիմնված լինի ուսումնական փորձի վրա: Այստեղ համակարգչի հնարավորությունները շատ մեծ են: Համակարգչային բազմապիսի ծրագրերը, որոնք թույլ են տալիս մոդելավորել ֆիզիկական փորձը, հզոր գործիք են ուսուցչի ձեռքում: Համակարգչային փորձը մի շարք առավելություններ ունի իրական փորձի նկատմամբ: Փորձը կարելի է իրականացնել շատ դանդաղ և դիտել

երևույթի այնպիսի մանրամասներ, որոնք իրական փորձի ժամանակ աննկատ են մնում: Համակարգիչը թույլ է տալիս վերարտադրել ոչ թե իրական փորձը, որը իր բարդության պատճառով դժվար ուսումնասիրելի է, այլ դրա պարզեցված մոդելը, ընդ որում՝ փորձի պայմանները (մոդելի պարամետրերը) կարելի է փոփոխել՝ այն մոտեցնելով իրականին:

Համակարգչային մոդելը թույլ է տալիս փոփոխել ժամանակի մասշտաբը և ուսումնասիրել ինչպես շատ դանդաղ, այնպես էլ շատ արագ ընթացող երևույթներ: Գծագրերը, գրաֆիկները, փորձի սարքավորումները մոնիտորի վրա պատկերվում են շատ հստակ, առանց երկրորդական մանրամասների:

Փորձը կարելի է կրկնել բազմաթիվ անգամներ, արագացնել, դանդաղեցնել կամ կանգնեցնել ցանկացած տեղում: Դա ուսուցչին հնարավորություն է տալիս անհրաժեշտ տեղում կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը, տալ մանրամասն բացատրություններ:

Աշակերտը կարող է առաջադրել վարկածներ և անմիջապես դրանք ստուգել համակարգչային փորձի միջոցով: Շատ մոդելներ թույլ են տալիս ստանալ երևույթը բնութագրող մեծությունների միջև եղած կախվածությունների գրաֆիկներ: Կարելի է դիմել տեսական նյութին, ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, օրենքները և սահմանումները բերել էկրանի վրա և հանգիստ աշխատել դրանց հետ⁵:

Հայոց լեզու և գրականություն առարկաների դասավանդման ժամանակ համակարգչային հնարավորությունների գործածումը թույլ է տալիս տարբեր մեթոդներով ստեղծել տեսասահիկներ, զարգացնել դրանք կազմելու և դրանցից օգտվելու հմտություններ, գրողների, գրական նյութի ուսուցման ժամանակ դիտել պատրաստի տեսասահիկներ: Բառագիտությունը լեզվաբանության այն բաժինն է, որն ուսումնասիրում է լեզվի բառային կազմը՝ բառապաշարը իր արդի վիճակում և պատմական զարգացման մեջ: Բառագիտության ուսումնասիրության առարկան նախ և առաջ բառն է: Բառագիտության համար բառը կարևոր է, մի կողմից, իբրև ինքնուրույն միավոր՝ նրա բառային ու իմաստային առանձնահատկությունները ուսումնասիրելու, մյուս կողմից, իբրև լեզվի բառային կազմի՝ բառապաշարի միավոր՝ բառային համակարգը քննելու տեսակետից:

⁵ Եզանյան Նունե, Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների դերը կրթության մեջ և կիրառումը դասագործընթացում, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ, 2020/№2, էջ 215-223

Բառագիտության բաժիններն են՝ բառի ուսումնառումը, իմաստաբանությունը, ստուգաբանությունը, բառակազմությունը և դարձվածաբանությունը: Բառագիտության մեջ են առնում նաև բառարանագրությունը⁶:

Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանում նախատեսված է գրական և լեզվական նյութի միասին ուսուցումը: Ստորև կներկայացնենք ՏՀՏ-ների կիրառմամբ նոր նյութի հաղորդման դաս:

6-րդ դասարանի մայրենի ծրագրով նախատեսված է ուսումնասիրել Հ.Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» բանաստեղծությունը և նախածանցները միասին:

Դասի ուսուցումը նպատակ ունի աշակերտներին ծանոթացնել բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարները, իմանալ Լուսավորչի հրաշագործության մասին և ընկալել վերջածանցների և նախածանցների առանձնահատկությունները:

Դասի ավարտին նրանք պետք է կարողանան արձակ շարադրել լեզենդի բովանդակությունը, ընտրել լեզենդի հիմնական իմաստը արտահայտող քառատողը և բացատրել, բառակազմական վերլուծության ենթարկել բանաստեղծության մեջ գտնվող նախածանցները և ցույց տալ դրանց նմանությունները:

Դասի կարելի է անցկացնել կիրառելով «Ուղղորդված ընթերցանություն», «5-րդպետնոց ազատ շարադրանք», «Քառաբաժան» մեթոդները:

Դասի անցկացման համար անհրաժեշտ են համակարգիչ, պրոյեկտոր, հեղինակի և Լուսավորչի նկարները, փոքրիկ տեսանյութ Խոր Վիրապի մասին, բառատետր, գունավոր գրիչներ, մատիտներ, թղթեր:

Խթանման փուլում կարելի է կիրառել «5- րդպետնոց շարադրանք» մեթոդը:

Գրատախտակին կարելի է գրել դասից դուրս բերված բառերը և հանձնարարել կազմել կապակցված խոսք: Հավաքել, ստուգել և խրախուսել:

Իմաստի ընկալման փուլում կարելի է համակարգչի և պրոյեկտորի միջոցով ցուցադրել Հովհաննես Թումանյանի և Լուսավորչի նկարները: Կարելի է դիտել փոքրիկ տեսանյութ Խոր Վիրապի մասին: Բացատրել գտնվելու վայրը և տալ լրացուցիչ տեղեկություններ դասագրքից դուրս: Այնուհետև երեխաներին ներկայացնել, որ այսօրվա դասը

⁶ Մուրիապյան Ա. Մ., Մուրիապյան Ք. Ա., Ֆելեքյան Մ. Հ., Ժամանակակից հայոց լեզու, -Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 115:

Հովհաննես Թումանյանի «Լուսավորի կանթեղը» ստեղծագործությունն է: Բացել դասագրքերը տեսնելու համար ինչ է ուզում պատմել հեղինակը:

Այնուհետև այս փուլում կարելի է կիրառել հարցադրումներով կամ ուղղորդված ընթերցանության մեթոդական հնարը:

1. Ի՞նչ գիտենք հեղինակի մասին:

2. Ի՞նչ գաղափար է ընկած այս բանաստեղծության հիմքում:

3. Ածանցները ի՞նչ դեր ունեն բառագիտության մեջ:

Ցուցադրել սահիկներ նախաձանցների մասին, և կատարել կազմած վարժությունները:

Այնուհետև ձևավորել աշխատանքային խմբեր՝ դասարանը բաժանել խմբերի, տալ հանձնարարություններ:

I խումբ

1. Արտահայտիչ ընթերցել:

2. Գտնել տրված բառերի հոմանիշները՝ կատար, հսկայական, մութ, թույլ, պայծառ:

3. Նկարել Խոր Վիրապի եկեղեցին:

II խումբ

1. Գտնել ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառերը, նշել դրանց գրական համարժեքը:

2. Նորից կարդալ բանաստեղծության ամեն տողի վերջին բառը, գտնել ձևով և հնչումով նման բառերը:

3. Նկարել կանթեղը:

III խումբ

1. Պետք է ածանցավոր բառեր կազմեն՝ օգտագործելով հույս, սեր, հավատ, երկիր բառերը:

2. Խումբը պետք է գրի նաև հայերենի ամենագործածական նախաձանցները (ամենա - ,ան-,ապ-,ընդ-,հակ- և այլն) :

3. Նկարել Արագած լեռը:

Կշռադատում

Այս փուլում կատարել եզրահանգումներ, քննարկել խմբերի կատարած աշխատանքները, խրախուսել անթերի լավագույն աշխատանքները: Գովել լավագույն նկարները, որոնք կատարել էին խմբերի նկարիչները:

Արդյունքների գնահատում-գնահատվում են՝

1. խմբերի աշխատանքները

2. ընդհանուր աշխատանքները

3. յուրաքանչյուր աշակերտի աշխատանք

Անդրադարձ քառաբաժանով.

1. Ի՞նչ սովորեցի	2. Ի՞նչ հասկացա
3. Ի՞նչպես կուզեի, որ լինեի	4. Ի՞նչ մեղեդի կլսեի

Տնային աշխատանք-անգիր անել դասը, կատրարել առաջադրանք 2, էջ 131:

Դասի անցկացումը ՏՀՏ-ով տալիս է մեծ արդյունավետություն, քանի որ երեխաները ոչ միայն լսեցին Լուսավորչի և Խոր Վիրապի մասին, նաև տեսան և արժևորեցին տեսածը:

Եզրակացություն

SՀS-ի օգտագործմամբ ցանկացած նյութի ուսուցում աշակերտներին նոր հնարավորություններ է տալիս մտածելու և մասնակցելու դասի նյութի ստեղծմանը, որն ուղեկցվում է առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրությունների շրջանակների զարգացմամբ և բավարարմամբ: Կրթության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումն ստեղծում է նպաստավոր պայմաններ սովորողի անձի ինքնաձևավորման համար և բավարարում արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, հասարակության պահանջները:

SՀS-ների կիրառումը բարձրացնում է հետաքրքրությունը դասի նկատմամբ, ակտիվացնում սովորողների իմացական գիտելիքների գործունեության շրջանակը, զարգացնում նրանց ոչ միայն մշակութային հնարավորությունները, այլև հնարավորություն տալիս կազմակերպելու ինքնուրույն և խմբակային աշխատանք, դասի ժամանակ օգնում բարելավվելու սովորողների գործնական կարողությունները և հմտությունները, թույլ տալիս որոնել, մշակել և յուրացնել տարբեր աղբյուրների, ինչպես նաև համացանցի տեղեկատվությունը:

Այսպիսով, եթե աշակերտը կարողանա նյութեր քաղել համացանցից, մշակել այդ նյութերը, սովորել, վերարտադրել և պահպանել դրանք, ապա ձեռք բերած համակարգչային հմտությունների շնորհիվ իր ապագա կրթական, աշխատանքային գործընթացում քիչ խնդիրներ և անորոշություն կունենա:

Արդյունքում մենք կունենանք հասարակությանը պիտանի և աշխատունակ շրջանավարտներ, որոնք ի վիճակի կլինեն հաղթահարելու ոչ միայն մասնագիտական կրթության դժվարությունները, այլև պատրաստ կլինեն դիմակայելու իրենց առջև ծառայած ցանկացած մարտահրավերների:

Գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան, Տեղեկատվական –հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Աստղիկ, 2014, 232 էջ:
2. Բայադյան Հ., Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, Երևան, 2005, 105 էջ:
3. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի, 6-րդ դասարան, Էդիտ Պրինտ, 2012, 240 էջ:
4. Եզանյան Նունե, Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների դերը կրթության մեջ և կիրառումը դասագործընթացում, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ, 2020/№2, էջ 215-223
5. Ղարիբյան Ռուզաննա, Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացում, Մխիթար Գոշ, գիտամեթոդական հոդվածներ, 2020/№2, էջ 97-108:
6. Սուքիասյան Ա. Ս., Սուքիասյան Բ. Ա., Ֆելեքյան Մ. Հ., Ժամանակակից հայոց լեզու, -Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջ 115: 462 էջ
7. Սուլթանյան Խ. Գ., Ուսուցման տեխնիկական միջոցները, Գյումրի 2009
8. http://www.noravank.am/upload/pdf/36_am.pdf

Դասի պլան

Կազմող՝ Նաիրա Ջավադյան
Դասարան՝ 10-րդ
Առարկան՝ Հայոց լեզու
Թեման՝ Բառարանագրություն

Նպատակները՝

1. **Ներկայացնել** բառարանագրությունը իբրև բառագիտության առանձին բաժին:
2. **Ներկայացնել**, թե ինչ է ուսումնասիրում բառարանագրությունը:
3. **Բացատրել**, թե բառարանագրությունը լեզվաբանության որ բաժիններին է առնչվում:

Վերջնարդյունքները՝

1. **Իմանալ**, որ բառարանագրությունը բառագիտության առանձին բաժին է:
2. **Իմանալ**, որ բառարանագրությունը ուսումնասիրում է բառարանների տեսակները, ինչպես նաև բառարան կազմելու կանոնները:
3. **Ներկայացնել** և **ցույց տալ**, որ բառարանագրությունը սերտորեն առնչվում է իմաստաբանությանը, ստուգաբանությանը, ռճագիտությանը:

Կապը ՀՊԶ-ի հետ.

Մ11) առաջադրի հետազոտական հարցադրումներ և վարկածներ, պլանավորի և իրականացնի հետազոտություններ՝ առաջարկելով համապատասխան մեթոդներ և բարելավման եղանակներ: Վերլուծի ստացված տվյալները առկա գիտելիքի և պատկերացումների համատեքստում, կատարի վերացարկումներ և ընդհանրացումներ

Մ 25) ուսումնասիրի և ընդլայնի սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ. և աշխատանքային հարթակ.

Մ26) վերլուծի իր ուսումնառության գործընթացը, ընտրի ինքնակրթության մեթոդներ և գնահատի դրանց արդյունավետությունը.

Մ33) կիրառի իր կրթական և աշխատանքային հնարավորությունները ինքնուրույն գործունեություն ծավալելու համար, ուսումնասիրի և գնահատի իր՝ տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտ գիտելիքներն ու կարողունակությունները, պատճառաբանված ընտրություն

Խնդիրներ

1. Տրված բառաշարքից **դուրս գրել** այն բառերը, որոնք վերաբերում են բառագիտությանը:

- ուղղագրություն
- ուղղախոսություն
- բառապաշարը
- բառակազմությունը
- բառարանագրություն
- նախադասություն
- հնչյունաբանություն

2. **Համապատասխանեցնել**.

Բառապաշար

բառերի կազմությունը

Բառակազմություն
Ուղղագրություն
Բառարանագրություն

հնաբանություններ
բառերը ճիշտ գրելու կանոնները
բառարանների տեսակները
բառարանները կազմելու կանոնները

3. **Գտնել** տրված բառի բացատրությունը, ստուգաբանությունը, ընդհանրական տեղեկություն, բառակազմությունը, հոմանիշները:

Խաչվող հասկացություններ՝

- Օրինաչափություն
- Կառուցվածք և գործառույթ

Կարողունակություններ՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաձանաչողական և քաղաքացիական կարողունակություն

**Կազմող՝ Նաիրա Ջավադյան
Դասարան՝ 10-րդ
Առարկան՝ Հայոց լեզու**

Թեման՝ Բառարանների տեսակները

Նպատակը՝

1. **Ներկայացնել** և **բնութագրել** բառարանների տեսակները:
2. Գծապատկերի միջոցով **ներկայացնել** բառարանների տեսակները

Վերջնարդյունքները՝

1. **Իմանալ** և **տարբերակել** բառարանների տեսակները:
2. **Կարողանա գտնել** տրված բառի մասին համապատասխան տեղեկությունը, նաև կիրառել առցանց բառարաններ:
3. **Կազմել** բառարանների տեսակների գծապատկերը:

Կապը ՀՊԶ-ի հետ.

Մ10. բացատրի տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը, ներկայացնի տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական և հետազոտական մտքի արգասիք, գիտակցի դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության և մարդու համար

Մ25. ուսումնասիրի և ընդլայնի սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման վարքագիծ.

Մ26. վերլուծի իր ուսումնառության գործընթացը, ընտրի ինքնակրթության մեթոդներ և գնահատի դրանց արդյունավետությունը.

Մ28. ստեղծի մեդիա բովանդակություն և կարողանա տարածել իր ասելիքը մեդիայի տարբեր հարթակներում՝ գիտակցելով դրա հետևանքներն ու ազդեցությունը, պահպանելով էթիկան և համացանցից օգտվելու անվտանգության կանոնները.

Խնդիրները՝

1. **Գտնել տրված բառերի բացատրությունը.** անգայթ,բաղդաստել,գարշապար, գիրթ, դիցուք:
2. Բառարանից **գտնել** մեղմորեն,մեղմորոք, ճամպրուկ, մրցույթ, շտապել բառերի ռուսերեն և անգլերեն տարբերակները:
3. Բառարանից **գտնել** պառկել,ամպամած, ելակ ,թթվածին, ձվածեղ բառերի արևմտահայերեն տարբերակները:
4. **Գտնել չքնաղ բառի**
 - հոմանիշը
 - հականիշը
 - ստուգաբանությունը
 - ընդհանրական տեղեկություն

Խաչվող հասկացություններ՝

- Օրինաչափություն
- Կառուցվածք և գործառույթ


Կարողունակություններ՝

- Սովորել սովորելու կարողունակություն
- Թվային և մեղիա կարողունակություն

ԴԱՍԻ ՊԼԱՆ

2-րդ դասաժամ

Դասարան՝	5-րդ
Ուսուցիչ՝	Նաիրա Ջավադյան
Առարկա՝	Մայրենի
Դասի թեման՝	Համո Սահյան «Արագիլները» բանաստեղծությունը
Լեզվական նյութը՝	Գաղտնավանկի Ը ձայնավորի հնչյունափոխությունը
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none">• բացատրել բանաստեղծության արտահայտած հիմնական գաղափարը• ուղղորդել հակիրճ տեղեկություններ հավաքագրելու թռչունների, նրանց բնույթի մասին• գիտակցել տալ իր յուրահատուկ լինելը և բնությանն ու շրջապատին օգտակար լինելու կարևորությունը• ընկալել տալ Ը ձայնավորի՝ շեշտից կախված հնչյունափոխության ուղղագրական և ուղղախոսական արժեքը
Վերջնարդյունքները՝	Աշակերտը պետք է կարողանա՝ <ul style="list-style-type: none">• ներկայացնել բանաստեղծության հիմնական ասելիքը, /ՀՊՉ Հ1/• առանձնացնել բանաստեղծության հիմնական միտքն արտահայտող բառերն ու բառակապակցությունները• գրավոր-բանավոր շարադրել բանաստեղծության բովանդակությունը /ՀՊՉ Հ2 /• ինքնուրույն որոնել, գտնել տեղեկություններ չվող թռչունների մասին, ներկայացնել ընկերներին /ՀՊՉ Հ11 /• Հոգ տանել իրենց բնակավայրում ճմեռող թռչունների և բնության մյուս արարածների մասին• Ցույց տալ գաղտնավանկ Ը-ի հնչյունափոխությունը, կիրառել գրավոր խոսքում
Միջառարկայական կապ՝	երաժշտություն, բնագիտություն, կերպարվեստ, աշխարհագրություն
Անհրաժեշտ նյութեր՝	ՏՀՏ միջոցներ, գունավոր մատիտներ, Ա4 չափսի թղթեր, դասագիրք, տետր
Կարողունակություններ՝	<ul style="list-style-type: none">• լեզվական կարողունակություն և գրագիտություն• թվային և մեդիա գրագիտություն
Խաչվող հասկացություններ՝	պատճառ-հետևանք անհատական և մշակութային արժեհամակարգ
Դասի տիպը՝	ամրապնդման դաս
Դասի ընթացքը՝	
Տնային առաջադրանքի ստուգում	
Դասն սկսել «Արագիլ» երգի ունկնդրումով /Ռուբեն Մաթևոսյանի կատարմամբ/:	



Զևավորող գնահատում

Հայր և մայր արագիլները դաշտում աստղի պես փայլուն մի կարծր իր գտան: Հայր արագիլը կտուցով հարվածեց փոքրիկ և տար_րինակ իրին, որից մանրիկ կայծեր թռան և թանձրախիտ բոց ար_ակելով_ան_ացան:

Արագիլներն ակնապիշ նայեցին մի ակ_նթարթում անհետացած իրի ու_ությանը, տարակուսած նայեցին իրար ու թևածեցին դեպի բույնը:

Առաջադրանքներ

1. Լրացնել բաց թողնված տառերը:

2. Տեքստից դուրս գրել գաղտնավանկի Ը ձայնավորի հնչյունափոխությանը վերաբերող բառերը և գրել համապատասխան պլունակներում:

հնչյունափոխված արմատ	անհնչյունափոխ արմատ
1.	1.
2.	2.
3.	3.
4.	4.
5.	5.

3. Տեքստում գտնել և դուրս գրել տրված բառերի հոմանիշները:

չքանալ _____

ամուր _____

սավառնել _____

արտաստվոր _____

Տնային աշխատանք

Անգիր սովորել բանաստեղծությունը:

Վարժություն 2, էջ 186

Հետադարձ կապ`

- Օրվա ամենաարդյունավետ և իրագործելի քննարկումը
- Նոր տեղեկություն, որ օգտակար էր իմանալ
- Լեզվական նյութում հանդիպած դժվարությունները: